ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**26.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի**

ք. Երևան 02.02.2018 թ.

«ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 26.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել 613900 (վեց հարյուր տասներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| **ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ** | **<<Բագարանի բարիք>> ՓԲԸ** |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, <<Կիլիկիա>> մ/6 |
| Հ/Հ 900011012573, ՀՎՀՀ 02565827 | Հ/Հ 11500498836200 |
| | ՀՎՀՀ 02235628 |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| Ա. Մկրտչյան | Ս. Մարգարյան |

Հավելված N 1
*26.05.201 թ. կնքված ծառայությունների մատուցման*
*N ՀՀՔՊԿ-ԲԸԾՁԲ-17/1 գնման պայմանագրի*
*02.02.2018 թ. կնքված N 1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 03)*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողություն | | 19700 | 19700 | 93200 | 93200 | 93200 | 378400 | 378400 | 378400 | 613900 | 613900 | 613900 | 613900 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ**
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012573, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

__________ Ա. Մխոյան
(ստորագրություն)

**Կատարող**
**<<Բագարանի բարիք>> ՓԲԸ**
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,
<<Կիլիյան>> մ/6
Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02235628

Տնօրեն՝

__________ Ա. Ղազարյան